ԾՐԱԳԻՐ

ԿԱՆՈՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻ ԴԱՏԱՐԱՆԱՑ

ԱԶԳԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

—

Ցաղագս աղերսից, պահանջմանց, ամբաստանութեանց եւ գրառմանց մասին մատուցանելի գրութիւնք

—

Յոդուած 1. Պէտք է որ,

Ա. Առ հասարակ ամեն տեսակ աղերս, բողոք և ամբաստանութիւն դրուած ըլլայ կառավարութեան յատուկ դրոշմաւոր թղթի վրայ։

Բ. Աղերսագրոյ մէջ գրուած ըլլայ դատախազին կամ անոր օրինաւոր փոխանորդին անունները, մականունները, արհեստն կամ զբաղմունքն և միանգամայն իւրաքանչիւրոյ բնակութեան կամ զբաղմանց տեղերն, այսինքն՝ թաղերն, փողոցներն, տանց կամ գործատանց թիւերն։

Գ. Միանգամայն յայտագրուած լինի պահանջեալ դրամին, ինչպէս նաև գիղեալ տոկոսին (եթէ ունի) քանակութիւնն, իսկ եթէ պահանջուած բանն դրամ չէ, անոր տեսակն և արժէքն և տեղն։

Դ. Պէտք է եւս կանխաւ գրուած ըլլայ դատախազին կրած ջնասուց, ինչ-

2373

պէս նաեւ դատական ծախուց և իւր փոխանորդին հատուցեալ կամ հատուցուելու օրինաւոր վարձուն դրամներն, եթէ պիտի պահանջէ զանոնք։

Ե. Պահանջուած գումարին կամ ո՛ր և է բանին մուրհակաւ, հաշուետումարով կամ ուրիշ ո՛ր և է դրութեամբ կամ եղանակաւ ապացուցանելի լինելն անգամ յիշուած ըլլալու է աղերսագրոյն մէջ։

Զ. Գումարի մը վճարման կամ ուրիշ բանի մը հատուցման մասին՝ ո՛ր և է ազգային դատարանէ մը տրուած վճռոյ մը դէմ բողոքելով՝ վճռաքննութիւն խնդրելու համար մատուցուելիք աղերսագրերն, յօդուածոյս Բ. պարբերութեան համաձայն խմբագրուած ըլլալէն 'ի զատ, հետերնին կցեալ ունենալու են երաշխագիր մը, ըստ որում՝ յետ վերաքննութեան՝ եթէ աղերսարկու անձն դարձեալ անիրաւ վճռուի, վերաքննութեան դատը վաստկող անձին կրած բոլոր դատական ծախքերը, ջնասները՝ տոկոսները և փոխանորդին (եթէ փոխանորդ ունէր) օրինաւոր վարձքը վճարելու համար դատապարտելոյն կողմէն մէկ կամ աւելի երաշխաւոր ցոյց տրուելու է, և հատուցանելի գումարին քանակութիւնը, կամ բանը և կամ նորա արժէքը երաշխագրոյն մէջ յայտագրելով՝ 'ի հարկին իրենց, այսինքն՝ երաշխաւորաց դրամովն, ընչիւք և ստացուածովք իրենց կողմէն վճարելու յանձնառու ըլլալնին օրինաւոր իշխանութեան մը առջեւ վաւերացեալ ստորագրութեամբը կամ կնքովը, կամ մատնանիշովը և կամ խաչանիշովը հաստատեալ ըլլալու է. և վերջապէս երաշխաւորաց

ստանձնած հատուցման բաւական կարողութիւն և հարստութիւն ունեցող անձինք ըլլալնին վկայութեամբ կամ իրօք ապացուցուած լինել պէտք է։

Երբ մատուցեալ աղերսագրի մը խմբագրութեան մէջ վերոյիշեալ օրինական պայմաններն չեն պարունակուիր, անընդունելի կ'ըլլայ և հարկ կը լինի ուրիշ մը մատուցանել որոյ մէջ ճշգիւ գրուած լինին վերոյիշեալ պարբերութեան տրամադրած օրինական պայմաններն։

Յօդ. 2. Աղերսագիր մը Կեդրոնական դատարանաց առջեւ ընդունելի ըլլալու և օրինական գործառնութեանց ենթարկուելու համար հարկ է որ արձանագրութեան դինն և պահանջելի դատական ծախուց կանխիկ մասն վճարուած ըլլալն Դատական Տեսչութեան ընդհանուր քարտուղարին կողմէն նշանակուած լինի աղերսագրոյն վրայ, և եթէ Դատական Տեսչութեան հաւանութեամբ կամ գիտութեամբը անվճար մընացած ըլլալուն օրինաւոր պատճառ մը ըլլայ, նոյնպէս պէտք է նշանակուի։

Իսկ Թաղային Հաշտարար Դատարանաց յանձնուած խնդրոյ և վէճերու համար Հաշտարար Դատարանաց պահանջելու դատական ծախուց վճարեալ ըլլալը նոյն Դատարանաց Դիւանագրպարաց կողմէն նշանակուի. և եթէ անվճար մնալուն օրինաւոր պատճառ մ'ըլլայ, սոյն պատճառն Թաղական խորհրդոց Դիւաններուն կողմէն վաւերացեալ լինելով աղերսագրոյն վրայ, այնուհետեւ ձեռնարկութիւն լինի խնդրոյն կամ վէճին քննութեանն ու լուծմանը, որպէս զի դատական հասութիւն հաշիւներն եւս կարենան սրոշուիլ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

—

Վասն աստիճանաց եւ իրաւասութեան Ազգային Դատարանաց

—

Յօդ. 3. Ազգային դատարաններն չորս աստիճանի բաժնուած են, և Հաշտարար՝ Կեդրոնական՝ Բարձրագոյն դատարան և Եկեղեցական վիճակային ժողով կ'անուանին, և սոնց միջոցաւ 'ի գործ կը դրուի Ազգային Դատական իշխանութիւնն։ (Տես Յօդ. 26 Գլուխ Բ. Օրինաց Ազգ. Վարչ. Կազմակերպութեան)

Յօդ. 4. Թաղային դատարաններուն պաշտօնն է՝ իրենց յղեալ կամ յանձնեալ խնդիրներն ու վէճերը հաշտարարութեամբ լուծելու աշխատիլ. և երբ չյաջողին, տեղեկագրել քննութեանց ելքն առ Դատական Խորհրդականն, որ կը յղէ զխնդիրն առ պատկանեալ Սենեակն Կեդրոնական Դատարանին։ (Տես Յօդ. 27 Գլուխ Բ. Օրինաց Ազգ. Վարչ. Կազմ.)

Յօդ. 5. Վարչական Օրինաց 27ող յօդուածին տրամադրութեան համեմատ 'ի բաց առեալ 35 և 41 յօդուածներով տրամադրեալ ազգային պաշտօնակալաց և եկեղեցականաց պաշտամանց վերաբերեալ խնդիրներն, որ և է վէճ կամ խնդիր նախ ամբաստանեալ կողմն բնակած թաղին Հաշտարար Դատարանին կը ներկայացուի՝ եթէ անմիջապէս Ազգային Կեդրոնական Դատարանին ձեռնհաս Սենեկին յանձնուելու կարօտ գործ մը չըլլայ. և երբ հաշտարարութեամբ

չվերջանայ գործն, տեղեկագրութեամբը հանդերձ՝ այնուհետեւ կը փոխադրուի Կեդրոնական Դատարանի ձեռնհաս Սենեկին։

Իսկ երբ հակառակորդք սորա վճռոյն մէջ իրենց իրաւանց կամ շահուց ճնաստակար որոշում մը տեսնելով՝ չհաւանին, կրնան Բարձրագոյն դատարանին դիմել՝ յետագայ կանոնաց համաձայն՝ վճիռը վերաքննել և ուղղել տալու համար։ (Տես Ազգ. Վարչ. Օրինաց Գլ. Բ. Յօդ. 27)

Յօդ. 6. Կեդրոնական դատարանն կը բաժնուի երեք սենեակներու, որք՝ Ամուսնական, Անհատական և Վարչական կ'անուանին։

Իւր պաշտօնն է՝ Ձեռնհաս սենեկին միջոցաւ քննել և վճռել ազգային շրջանակին մէջ տեղի ունեցած մէն մի դատերը։ (Տես Ազգ. Վարչ. Օրինաց Գլ. Բ. Յօդ. 31)

Յօդ. 7. Ամուսնական սենեկին կը պատկանին ամուսնական դատերն։ (Տես Յօդ. 33. Ազգ. Վարչ. Օրինաց)

Յօդ. 8. Անհատական սենեկին կը պատկանին բոլոր անհատական դատերն, ըստ օրինակ՝ ժառանգական, Կտակային, Ընտանեկան, Պատուոյ և Վնասու հատուցման և այլ ամենայն անհատական դատերն։ (Տես Յօդ. 34 Ազգ. Վարչ. Օր.)

Յօդ. 9. Վարչական սենեկին կը պատկանին Վարչական Խորհրդոյ և Դատական Բարձրագոյն ատենի անդամոց պարտականութեանց և պաշտօնէից վերաբերեալ դատերէն 'ի զատ՝ բոլոր առաջնորդական, վանական և թաղային խոր-

հրդոյ, ինչպէս նաեւ բոլոր ազգային կրօնական և աշխարհական պաշտօնէից, մանկավարժից և դասատուաց պաշտամանց և պարտաւորութեանց, վերջապէս ընտրական իրաւանց և ազգային հրատարակութեանց վերաբերեալ վէճերուն դատերն։ (Տես Յօդ. 35 Ազգ. Վարչ. Օր.)

Յօդ. 10. Բարձրագոյն Դատարանն կը բաղկանայ Կրօնային և Քաղաքային անուանեալ երկու Ատեաններէ, որք միանալով կը կազմեն գլխաւն Ատեանը։ (Տես Յօդ. 36 Ազգ. Վարչ. Օրինաց)

Յօդ. 11. Կրօնային Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական դատարանին վճռած այն խնդիրները, որք զուտ կրօնական հանգամանք ունին։ (Տես Յօդ. 38 և 44 Ազգ. Վարչ. Օր.)

Յօդ. 12. Քաղաքային ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական դատարանին վճռած այն խնդիրները որք զուտ քաղաքական հանգամանք ունին։ (Տես Յօդ. 39 Ազգ. Վարչ. Օրինաց)

Յօդ. 13. Խառն ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական դատարանին վճռած այն խնդիրները որք կրօնական և քաղաքական հանգամանքը միանգամայն ունին։ (Տես Յօդ. 40 Ազգ. Վարչ. Օրինաց)

Յօդ. 14. Եկեղեցական վիճակային ժողովն պաշտօն ունի քննել ու վճռել նախ՝ Կրօնային ատենին ձեռնհասութենէն վեր եղող ամեն խնդիրները. երկրորդ՝ Կրօնային ատենին այն ամեն վիճռները, որք Պատրիարքէն կամ Կրօնական խորհրդականէն չեն ընդունուած։ (Տես Յօդ. 44 և 45 Ազգ. Վարչ. Օր.)

Յօդ. 15. Ազգային դատարանաց իրաւասութեան շրջանակէն դուրս համարուող ամեն տեսակ դատերն կրնան յիշեալ դատարանաց կողմանէ քննուիլ և վճռուիլ, երբ դատախազաց երկոքին կողմանց համաձայնելովն՝ իւրեանց ստորագրութեամբ վաւերացեալ գրութեամբ մը իրենց դատը քննելու և վճռելու համար՝ միջնորդ դատաւորի իրաւասութիւնը տան Ազգային դատարանի մը անդամոց, որոց անունքն ու մականունքն, նաեւ խնդրոյն կամ վէճին քննութեան և որոշման համար պայմանեալ դաշինք և յապաղման ժամանակը պարտին ճշդուած լինիլ նոյն պայմանագրութեան մէջ։

Եւ դատաւորք օրինաց դէմ վարուած չեն համարուիր եթէ սոյն եղանակաւ՝ իբրև միջնորդ դատաւոր՝ ստանձնելով դատը՝ քննեն, լուծեն, որոշեն, վճռեն ու վերջացնեն զայն՝ միջնորդ դատաւորաց յատկացեալ օրինաց համաձայն։ Վասն զի, նմանօրինակ պարագայից մէջ դատաւորք երկու հակառակորդաց փոխանորդներն կը համարուին, ըստ 1453 և 1851 յօդուածոց Մէճէլէյի, ինչպէս նաեւ ըստ տրամադրութեան Դ. ՄԸ յօդուածի դատավարական առժամանակեայ օրինաց Օսմանեան տէրութեան։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

—

Փոխանորդաց եւ գործակատարներու պաշտօններու մասին

—

Յօդ. 16. Փոխանորդութիւն կամ գործակատարութիւն է՝ իրաւունք կամ իշխանութիւն մը, զոր մէկն իւր գործին համար կուտայ ուրիշի մը, որպէս զի իւր անուամբ և իւր տեղը կատարէ զայն՝ պայմանեալ արտօնութեամբք և սահմաններով։

Ա. Այս գործողութեան փոխանորդեալ կ'ըսուի. և վերոյիշեալ իրաւունքը կամ իշխանութիւնը տուողին փոխանորդաբար և ստանձնողին կ'ըսուի փոխարարեալ կամ աւելի պարզ կերպով փոխանորդ։

Յօդ. 17. Ո՛ և է անձ մը կրնայ իւր համարմանն ու վստահութեանը արժանացած զուրիշ մէկը իրեն համար փոխանորդ կարգել, եթէ փոխանորդն կամ գրով և կամ գործողութեամբ ընդունի այս պաշտօնը, որ հետեւեալ սահմաններով կամ պայմաններով կրնայ տեղի ունենալ։

Ա. Փոխանորդարարն կրնայ իւր անձին սեպհական դրամը, պահանջը կամ ուրիշի մը քով գտնուած ո՛ և է դոյքը պահանջելու, ստանալու և յանուն իւր ընկալագիր և պարտուց հատուցման մուրհակ խտալու արտօնութիւնները տալ իւր փոխանորդին։

Բ. Փոխանորդարարն կրնայ արտօնել իւր փոխանորդը, որ յանուն և 'ի հաշիւ իւր (փոխանորդարարին) դիմէ ազգային դատարանաց և մարմնոց, աղերսագիր, բողոքագիր և այլ ամեն

տեսակ օրինաւոր պաշտօնական գրութիւն մատուցանէ և դատ բանայ ու վարէ Ազգային ձեռնհաս դատարանաց և ատեանից մէկին կամ միւսին և կամ բոլորին առաջն՝ ըստ պահանջից պարագայից։

Գ. Փոխանորդարարն կարող է արտօնութիւն և իրաւունք տալ փոխանորդին որ անձամբ դատ վարելով խնդրէ, պահանջէ, փաստաբանէ, պաշտպանէ և հերքէ առաջի դատաւորաց։

Դ. Կարող է նաև արտօնել զփոխանորդն 'ի ներկայութեան և կամ 'ի բացակայութեան հակառակ կողման դատ վարելոյ միայն մասնաւոր որոշեալ դատարանի մը առաջն, ինչպէս կամ միայն Հաշտարար դատարանի, կամ միայն Կեդրոնականին այս կամ այն սենեկին, կամ միայն Բարձրագոյն դատարանին այս կամ այն ատենին և կամ ասոնց բոլորին ալ առաջ ըստ պահանջից իրաց և պարագայից։

Ե. Նոյնպէս կարող է արտօնութիւն տալ փոխանորդին որպէս զի, եթէ դատարանի մը կողմէն արուած որոշումն կամ վճիռն օրինաց համաձայն չի լինի իւր շահուց և իրաւանց հակառակ և վնասակար լինի, մերժէ, չընդունի զայն՝ և բողոքելով անոր դէմ վերաքննութեան համար Հաշտարար դատարանէն Կեդրոնական դատարանին դիմէ, (Տես Յօդ. 29 Ազգ. Վարչ. Օրինաց) և 'ի հարկին անտի ևս կոչ ընելով՝ վճռաքննութեան ձեռնհաս ատենին դիմէ, և, եթէ վճռաքննիչ ատենին որոշումէն ալ գոհ չի լինի, Սրբազան Պատրիարք Հօր, կամ Դատական Ցեսչութեան դիմելով՝ իրընդերն վճռաբեկ ատենի կամ Դերագոյն Ժողովի մը յանձնել տայ։

Զ. Փոխանորդարարն կրնայ եւ արտօնութիւն տալ փոխանորդին, որ նոյն ինքն անձամբ, եւ փոխանորդն՝ փոխանորդարար դատի չհրաւիրուած դատարանէ մը արդէն վճռեալ խնդիր մը նորաքննել եւ որոշել տալու համար դիմէ այն դատարանին՝ որ արդէն որոշում մը տուած է նոյն խնդրոյն, միայն թէ ո՛չ ինքն եւ ո՛չ իւր փոխանորդն աղերսակից կամ դատակից եղած չըլլան խնդրոյն նախորդ քննութեան եւ որոշման հաղորդուած ժամերուն։

Է. Եւ վերջապէս փոխանորդարարն կարող է փոխանորդին արտօնութիւն տալ վաճառելու կամ ուրիշի մը յանձնելու իւր (փոխանորդարարին) սեպհական ստացուածքը, դոյքը եւ վաճառեալ գոյից դրամը դանձելու եւ ասով վճարելու իւր անձնական պարտքերը, այլոց հետ ունեցած հաշիւները քննելու, կարգադրելու եւ վաւերացնելու, պահանջից մեծ կամ փոքր մասը ղեղջելու, պահանջքը դանձելու համար պարտատիրոջ վաճառքը, դոյքը կամ կալուածը գրաւի եւ աւանդի ներքեւ դնել տալու եւ առնելիքը վճարուելու համար անոնցմէ բաւական մասը ըստ օրինաց՝ ծախել տալու, դրամն ստանալու եւ հաշիւը դոյելու, եւ, եթէ պարտաւորն սնանկանայ՝ նորին աղագաւ գործել իւր փոխանորդարարին պահանջին պատկանող համամատական դումարը կամ դոյքը ձեռք բերելու համար։

Ը. Ամուսնական դատերու մէջ փոխանորդն երդում պիտի ընէ ամուսնացելոց դաշտնիքը, թէ՛ բանիւ բերանոյ, թէ՛ գրով եւ թէ՛ ո՛ր եւ է նշանով, չի հրատարակել, ուրիշի չհաղորդել՝

վճռաքննութեան անդամ չդիմել, մինչեւ որ վերաքննութեան, վճռաքննութեան կամ վճռաբեկութեան բողոքագիր մը՝ ուղղակի գործին տիրոջը ստորագրութեամբ՝ մատուցուելով նկատի առնուիլն որոշուի։

Պէտք է որ փոխարարողք միշտ ներկայ գտնուին դատարանաց՝ ամուսնական դատերուն մէջ։

Յօդ. 18. Նախընթաց 17րդ. յօդուածի պարբերութեանց մէջ յիշատակուած հետապնդումներէն մէկը կամ աւելին եւ կամ ամբողջը 'ի գործ դնելու համար փոխանորդին արտօնութիւն տրուելէ յետոյ, այլ եւ հարկ չմնար իւրաքանչիւր տեսակին վերաբերեալ մասնաւոր հետապնդումները ընելու համար ալ մասնաւոր արտօնութիւններ ստանալու փոխանորդարարէն, այլ կրնայ ըստ օրինի ազատաբար գործել պարտուպատշաճը։

Յօդ. 19. Օրինաւոր չեն փոխանորդի մը տրուած այն ամեն արտօնութիւնք, որք հասկանալի կերպով ճշդուած չըլլալով՝ ընդհանուր առմամբ եւ վերացական ու անհաստատ խօսքերով բացատրուած են։

Ուստի փոխանորդութիւնն՝ օրինաց առջեւ ընդունելի ըլլալու համար՝ պէտք է ըլլայ որոշ, եւ փոխանորդարարն ու փոխանորդն երկուստէք յօժարակամ ընդունած լինին եւ 17րդ. յօդուածի մէջ հետապնդմանց կամ ամբողջին կամ միայն մէկ մասին համար տրուած արտօնութիւններն պէտք է գրուին եւ ճշդուին փոխանորդագրին մէջ, առանց սակայն պարտաւոր լինելոյ մանրամասն

պարագայները անպատճառ յիշելու։

Յօդ. 20. Փոխանորդարարն կարողէ յետակոչել այն իրաւունքները, զորս տրուած է իւր փոխանորդին, և փոխանորդական պաշտօնէն ձգել զնա, եթէ ասոր հակառակ արդէն տրուած պայման մը չգտնուի մէջերնին։ (Տես Ս. Մաս 38 յօդուածի)

Յօդ. 21. Փոխանորդարարին մահուամբ կը դադրին փոխանորդին արտօնութիւնքն ու պաշտօնն։ Բայց այսպիսի պարագայի մը մէջ՝ մինչև որ ժառանգորդք ձեռք դնեն կամ ուրիշի մը ձեռք դնել տան գործին, խնդրոյն կամ վէճին, փոխանորդն պարտաւոր է շարունակել իւր պաշտօնը երբ 'ի մօտոյ կը տեսնէ որ փոխանորդութեան պաշտօնը դադրեցնելէն և չի շարունակելէն պիտի վտանգին ժառանգորդաց իրաւունքն՝ մինչև որ ժառանգորդք ուրիշի մը յանձնեն գործը։ (Տես Յօդ. 38)

Յօդ. 22. Փոխանորդին արգիլուած է զինքը փոխանորդողին հաշուոյն համար ծախու դրուած վաճառքը, գոյքը կամ կալուածը նոյն ինքն փոխանորդն յանուն իւր դնել և իւր անձին սեպհականել։ Այսպիսի պարագայի մը մէջ փոխանորդն պատասխանատու է առաջի օրինաց։ և փոխանորդին ծախու առած վաճառքը՝ գոյքը կամ կալուածը կրնան եւ առնուիլ անկէ և նորէն վաճառուիլ 'ի հաշիւ իւր փոխանորդարարին։

Նոյնպէս արգիլուած է փոխանորդին 'ի հաշիւ և յանուն իւր փոխանորդարարին ձեռք բերած դրամները, գոյքը, իւր անձնական գործոց և շահուն

կամ այլոց յատկացնել, այլ կը պարտի փոխանորդն իւր գանձած դրամները անխիւր փոխանորդարարին յանձնել և ճշդութեամբ հաշիւ տալ նմա, ապա թէ ոչ, կը պարտաւորի նոյն դրամին տոկոսն ալ հատուցանել, հաշուելով զայն՝ դրամը կամ գոյքը իւր հաշուոյն և շահուն համար գործածած թուականէն սկսեալ։

Յօդ. 23. Եթէ մէկն՝ իւր գործին կարգաւորութեանը համար ուրիշի մը հրաման կամ արտօնութիւն տայ պայմանաւ մը՝ փոխանորդութեան սահմանափակ իրաւունք մը տուած կը լինի, և փոխանորդն փոխանորդարարին այս առթիւ կրած վնասը, եթէ հաստատուի, տուժելու կրնայ պարտական ըլլալ, եթէ ստանձնած հրամանին և պայմանին հակառակը գործէ։

Յօդ. 24. Փոխանորդութիւնն կրնայ տրուիլ կամ օրինաւոր իշխանութեան պաշտօնատեարց առջև կամ փոխանորդարարին և փոխանորդին միջև ստորագրեալ մասնաւոր գրութեամբ և կամ առանձին նամակով մը։ Նոյնպէս բերանացի հրամանաւ կամ հաճութեամբ ալ փոխանորդութիւն կը տրուի, բայց այն ատեն փոխանորդն 'ի հարկին կը պարտաւորի ապացուցանել իրեն փոխանորդութիւն տրուած ըլլալը, ինչպէս նաև հաստատել փոխանորդութեանը արտօնութեանց սահմանները և պայմանները։

Փոխանորդութիւնը նաև պայմաններն ընդունուած կ'ըլլան կամ գրաւոր կերպով հաճութիւն տուած ըլլալով և կամ եթէ փոխանորդութեան պաշտօնն սկսուած ու գործադրուած ըլլայ՝ առանց

ընդդիմութեան հանդիպելու փոխանորդարարին կողմէն։

Յօդ. 25. Փոխանորդութիւնն ձրի է՝ եթէ փոխարինութեան և վարձու պայման կանխաբար դրուած չըլլայ։ (Տես Յօդ. 36)

Յօդ. 26. Կրնայ փոխանորդութիւն արուիլ՝ փոխանորդարարին մասնաւոր մի գործին, ինչպէս նաև ընդհանուր գործոց համար, փոխանորդագրոյն պարունակած արտօնութեանց համեմատ. վասն զի, եթէ փոխանորդագրոյն մէջ բացորոշ նշանակուած չըլլայ դատին ըստ ամենայնի յանձնառեալ և լիազօր ու անթերի փոխանորդ կարդեալ լինելն, փոխանորդն չընդունուիր դատին ամեն ատիճանի դատավարութեան մէջ։ (Տես Յօդ. 42 Օսմ. դատավար. առժամեայ կանոն)

Յօդ. 27. Արգիլուած է փոխանորդին իւր փոխանորդութեան վերաբերեալ արտօնութեանց սահմանէն դուրս կամ զանցառութեամբ գործել։

Յօդ. 28. Նաև կանայք կրնան փոխանորդ կարգուիլ առաջի Ազգային դատարանաց, նա մանաւանդ կանանց կողմէն։

Յօդ. 29. Անչափահաս, ինչպէս նաև մտային կարողութիւններն խանգարեալ անձինք կարող չեն իրենց տեղ փոխանորդ կարգելու. այլ նոցա օրինաւոր խնամակալներն կամ հոգատարներն ձեռնհասութիւն ունին նոցա վերաբերեալ գործոց և խնդրոց և վէճերուն կարգադրութեանց համար փոխանորդ կարգել։

Յօդ. 30. Փոխանորդն պարտի ամբողջ խղճիւ, անմեղութեամբ, անբծութեամբ այլ և ճշդիւ և անթերի կատարել իւր պաշտօնը, ապա թէ ոչ տուգանաց և տոկոսի վճարման ենթակայ կ'ըլլայ։ (Տես Յօդ. 236 ձէզա գանունը հիւմայուն) Պարտաւոր է նաև ստանձնած և սկսած գործը կատարել, եթէ ՁԼասու կամ կորստեան վտանգ կայ զայն անկատար թողլոյ մէջ։

Յօդ. 31. Փոխանորդ մը կրնայ ուրիշի մը փոխադրել իւր ստացած փոխանորդութեան իրաւունքը, կարողութիւնը կամ արտօնութիւնը կամ մասամբ և կամ ամբողջովին, եթէ արդէն ղուրիշ մը փոխանորդ կարգելու արտօնութիւնն ալ իրեն տրուած լինի։

Յօդ. 32. Երբ երկու կամ աւելի անձինք փոխանորդ կարգուած են մի և նոյն գործի, խնդրոյ կամ վէճի մը համար, միմեանց գործառնութեանց արդեանցը մասին համերաշխաբար պատասխանատու չեն, եթէ այդպէս պատասխանատու ըլլալու պայմանն իրենց և փոխանորդարարին միջև դաշնաւորեալ չըլլայ։

Յօդ. 33. Երբ փոխանորդն իւր գործառնութեանց վիճակն ու արդիւնքը ճշդութեամբ կը հաղորդէ փոխանորդարարին՝ ի դիտութիւն նորա, այնուհետև զերծ կը մնայ պատասխանատուութենէ, եթէ անձնական մասնաւոր պարտաւորութեանց ներքև գտնուած չըլլայ։

Յօդ. 34. Փոխանորդարարն կը պարտի ընդունիլ և գործադրել յանուն իւր

եղած բոլոր այն պայմանները ու խոստումները, զորս փոխանորդն իւր իրաւասութեան սահմանին մէջ դաշնադրած է։ Նոյնպէս պարտաւոր է սահմանեալ արտօնութենէ դուրս տեղի դտած խոստումը ու գործողութիւնը իսկ ընդունիլ և կատարել, երբ այդ մասին իւր լռելովն կամ մանաւոր վարմունքովը ու գործողութեամբը հաստատած ըլլայ փոխանորդին խոստացածը կամ գործածը։

Յօդ. 35. Փոխանորդարարն պարտի վճարել իւր փոխանորդին բոլոր այն դրամները՝ զորս փոխանորդն օրինաւոր ծախուց համար վճարած է իւր փոխանորդական պաշտօնը կատարելու առթիւ։ Նոյնպէս տոկոսները՝ վճարմանց թուականներէն հաշուելով։ Բայց ասոր կը պարտաւորի նաև փոխանորդութեան վարձքն ալ հատուցանել եթէ արդէն պայմանադրեալ է. նոյնպէս պարտաւոր է հատուցանել փոխանորդին այն ծախքերը՝ յորոց իրական օգուտ մը իսկ յառաջ եկած չըլլայ, բաւական է որ փոխանորդն իւր ստանձնած գործոց մէջ ճշտակար ընթացք մը բռնած չըլլայ։ Ուստի փոխանորդարարն բնաւ իրաւունք չունի փոխանորդին վարձքէն կամ ծախքէն ո՛և է զեղչ ընելու, դատին անյաջող արդիւնքն կամ ծախուց աւելորդութիւնը առարկելով։

Յօդ. 36. Փոխանորդարարն պարտի վճարել նաև փոխանորդին այն չափաւոր ճշտաը՝ զոր կրած է փոխանորդութեան ձրի պաշտօնը կատարելուն առթիւ երբ անխոհեմութենէ առաջ եկած չէ, այն ճշտան։ (Տես Յօդ. 25)

Յօդ. 37. Երբ երկու կամ աւելի

թուով անձեր զմէկն փոխանորդ կարգած ըլլան, իւրաքանչիւր փոխանորդաբար միմեանց երաշխաւոր համարուելով պարտաւոր են. վերը յիշուածին համաձայն. ամբողջապէս վճարելու փոխանորդին պահանջը, ինչպէս նաև ընդունելու և կատարելու նորա փոխանորդաբար գործածն ու խոստացածը կամ ընդունածը։

Յօդ. 38. Փոխանորդին պաշտօնն կը վերջանայ,

Ա. Երբ իրեն յանձնուած գործն կարգադրուի և վերջանայ։

Բ. Փոխանորդարարին յետս կոչելովն իւր տուած արտօնութիւնները, երբ հակառակ պայման մը չըլլայ։

Գ. Փոխանորդին հրաժարելովն, երբ հակառակ պայման մը չդտնուի։

Դ. Երբ մարմնապէս կամ բարոյապէս մահ պատահի. այսինքն՝ քաղաքային և աղգային իրաւանց կորուստ կամ սնանկութիւն պատահի կամ փոխանորդարարին և կամ փոխանորդին։

Յօդ. 39. Օրինաւոր կը համարուի ինչ որ փոխանորդն գործած ու կատարած է, անօրինութեանցը համաձայն տեղեակ չըլլալով որ՝ այն միջոցին՝ փոխարարողին վերահասեր են մահ կամ այնպիսի դիպուած մը՝ որ բնականաբար կը դադրեցնեն փոխանորդութեան պաշտօնը։ Բայց և այնպէս վախճանելոյն կամ չ՝ատակելոյն ժառանգորդք կամ յաջորդողք պարտաւոր են ընդունելու փոխանորդին գործողութիւնները, եթէ անկեղծութեամբ և խղճի մտօք՝ ի գործ դրուած են։

Յօդ. 40. Վախճանելոյն կամ չա-

տակելոյն ժառանգորդք կամ յաջորդք պարտին նորա մահը կամ չ'ատակումը իրենց հրահանգներովն հանդերձ՝ ծանուցանել փոխանորդին, վասն գործադրութեան պարտ ու պատշաճին և վասն օգտի և շահուն փոխանորդին։

Յօդ. 41. Երբ փոխանորդն փոխանորդութեան պաշտօնէն կը ձգուի, հարկ է որ փոխանորդարարն օրինաւոր միջոցաւ հաղորդէ զայն 'ի գիտութիւն այն անձանց և անոնց փոխանորդաց, որոնց հետ՝ կամ դէմ՝ պաշտօնանկ փոխանորդն գործ և դատ ունի դադարող փոխանորդութեան առթիւ։

Յօդ. 42. Նոր փոխանորդին անուանումն հնոյն փոխանորդութենէ անկումը կ'ապացուցանէ, սկսելով այն օրէն՝ յորում նախորդին հաղորդուած է իւր յաջորդին կարգումն։

Յօդ. 43. Երբ փոխանորդարարն առանց բանաւոր և արդարացուցիչ պատճառի անժամանակ ձգէ կամ պաշտօնէ անկանէ իւր փոխանորդը, կը պարտաւորի ամբողջապէս վճարել նորա պայմանեալ վարձքը և հատուցանել միանգամայն նորա ըրած ծախքը՝ տոկոսիւքն հանդերձ, ինչպէս որ յիշուած է վերը։

Նոյնպէս փոխանորդն ալ կրնայ ըստ իրաւանց հաւասարութեան՝ հրաժարիլ՝ իւր ստանձնած փոխանորդական պաշտօնէն, հաղորդելով զայն իւր փոխարարողին։ Միանգամայն՝ իւր այս տարաժամ հրաժարումէն՝ եթէ փոխարարողին վնաս մը պատճառի, փոխանորդն պարտի տուժել իւր պայմանեալ վարձքը երբ փոխանորդն իւր պաշտօնը շարունակելու մասին անկարողութեան մէջ ինկած չըլլայ և հրաժարելովն ինքն ևս վնասուած չլինի։

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Վասն հրաւիրանաց եւ ներկայացմանց դատախազից եւ դատախազելոց

Յօդ. 44. Դատախազն՝ աղերսագիրը տալէ վերջը՝ (Տես Յօդ. 1 և 2) պարտի պատկանեալ դատարանին ատենապետին դիմելով խնդրել որ զդատախազեալն դատարան կոչելու համար հրաւիրագիր ղրկէ. որովհետև առանց երկու կողմը օրինաւոր եղանակաւ 'ի դատ հրաւիրելու, մէկ կողմին դատաստանութեան վրայ տրուած ամեն որոշում և վճիռ ոչինչ կը համարուին։

Դատարանէն ղրկուած ամեն հրաւիրագիր պարտի պարունակել Ա. դատախազին և դատախազելոյն անուանքն ու մականունքը, արհեստները, բնակած տանց կամ գործատանց թաղը, փողոցն ու թիւը։ Բ. դատի նիւթը և 'ի դատարան ներկայանալու օրն ու ժամը և հրաւիրագիրը՝ այսինքն՝ եկնակոչը տանող պաշտօնէին անունն ու մականունը։

Պէտք է որ դատահրաւիրագիրք վիանդամայն թուահամարեալ լինին և տարւոյ և ամսոյ թուականը կրեն, և դատի ներկայանալու համար որոշեալ օրէն ութն օր առաջ գոնէ հաղորդուին դատախազելոյ կողմին։

Յօդ. 45. Դատի կոչուողն պարտի

ընդունել զհրաւիրագիրը և ստացագիր մը տալ զայն հաղորդող պաշտօնէին։ Իսկ եթէ դատի կոչուողն չգտնուի իւր տունը կամ դրաղման տեղին, և կամ չուզէ ընդունիլ զհրաւիրագիրը և կամ ընդունելով զայն՝ դժկամակի ստորագրելու ստացագիրը, այդպիսի դիպուածի մէջ, եկնակոչ տանող պաշտօնեայն կը պարտի մօտակայ ազգային Թաղական խորհրդոյն, և 'ի հարկին՝ Թաղին Հայ Մուխթարին դիմելով, իւր հետ ընկերանալու համար երկու անձ ուղել, որք նոյն պաշտօնէին հետ կերթան դատախաղելոյն բնակարանը և հրաւիրագիրը հոն յանձնել տալով կը հաստատեն եղելութիւնը իրենց կողմէ ստորագրեալ կամ կնքեալ գրով մը։

Իսկ եթէ դատախաղեալն ընդունելով զհրաւիրագիրը ուզէ ստացագիրը տալ, սակայն ո՛չ գրել գիտնայ և ո՛չ կնիք ունենայ, այն ատեն հարկ կըլլայ նորա մատնանիշը կամ խաչանիշը դնելով այս մասին երկու անձանց վկայագրել տայ մէջը հաստատելով թէ՝ հրաւիրագիրը հաղորդուած է այն անձին։

Հետևաբար Թաղական խորհուրդք՝ ինչպէս նաև Մուխթարք և մանաւանդ հրաւիրագիրը տանող պաշտօնեայք պարտաւոր են այսպիսի պարագայից մէջ իւրաքանչիւրն իրենց վերաբերած մասը ճշդրտութեամբ գործադրել՝ առանց ակնառութեան և յապաղման, ապա թէ ո՛չ, հակառակ վարուողք պատասխանատու կը մնան Ազգային իշխանութեան առջև և յանդիմանութիւն կը կրեն, մինչեւ իսկ պաշտօնանկ կ'ըլլան և՝ 'ի հարկին՝ ՁՔասուց և ծախուց վճարման իսկ կը դատապարտուին։

Յօդ. 46. Երբ դատախաղն օրինաւոր կերպով և պահանջուած դրամին կամ գոյից քանակութեան կամ արժէքին վճարման կարող մէկ կամ երկու և կամ աւելի՝ պատուաւոր երաշխաւոր ցոյց տայ դատարանին, կարող է խնդրել և պահանջել որ դատարանին տալիք վճռոյն գործադրութիւնը ստանձնող և ապահովող պատուաւոր և ընդունելի երաշխաւորութեան ներքև առնուի դատախաղեալն, որպէս զի, եթէ կամ երեսը պահէ կամ խոյս տայ քաղաքէն և կամ ուրուշեալ օրերը դատարան չներկայանայ մինչև ցվերջ դատին, երաշխաւորք պարտաւոր լինին վճռելի դումարին վճարման կամ նիւթին հատուցման՝ հանդերձ ՁԼասիւք՝ տոկոսեօք և դատական ծախիւք։

Յօդ. 47. Երբ դատի կոչուող կողմն երկու կամ աւելի անձերէ կը բաղկանայ և անոնցմէ մին կամ մէկ քանին ուրիշ քաղաք գտնուելով՝ կարող չեն անմիջապէս ներկայանալ պատկանեալ դատարանին, և եթէ պահանջուած բանն դատախաղելոց թուոյն համեմատ կրնայ այնքան մասի և կտորի վերածուիլ և բաժնուիլ, այդպիսի դիպուածի մէջ, դատախաղն կրնայ միայն ներկայ գտնուողները դատարան կոչել տալ և պահանջել ասոնց բաժնին ընկած մասերը, վերապահելով սակայն բացակայից դէմ ունեցած իրաւունքը, և սպասել յարմար ժամանակի և առթի։

Իսկ երբ պահանջեալ բանն բաժանելի չէ այնքան մասի, պահանջողն կը հարկադրի սպասել մինչև որ ամենէն հեռու տեղ գտնուող ամբաստանելոյն ներկայացման հրաւէրն հասնի նմա, և

որոշեալ օրն անձամբ ներկայանայ կամ օրինաւոր փոխանորդ մը յղէ դատարանին, ըստ տրամադրութեան յետագայ 48 ՐԴ և միւս յօդուածոց։

Յօդ. 48. Երբ պահանջուած բանն անբաժանելի ըլլայ, և դատախազելոց մին կամ մէկ քանիներն ուրիշ քաղաք գտնուին, և ամբաստանողն Պոլսեցի ըլլայ և Պոլիս բնակի, հրաւիրագիրն Ազգային Պատրիարքարանէն կը հաղորդուի բացակայից իրենց գտնուած կամ մօտը եղած Առաջնորդարանին կամ Թաղային խորհրդին կամ տեղւոյն երևելի ազգայնոց, և 'ի հարկին՝ դրացեայ և մինչև իսկ տեղական կառավարութեան միջոցաւ, և հրաւիրագիրն հաղորդուած օրուան թուականէն սկսելով՝ երկամսուղիով կամ շոգենաւով, և եթէ ասոնք չկան, սովորական ճանապարհով որքան որ տեւէ մինչև պատկանեալ դատարանը հասնելու՝ այնքան օրուան վրայ տասն և հինգ օր եւս աւելի միջոց կը տրուի անձամբ ներկայանալնուն կամ օրինաւոր փոխանորդ ներկայացնելնուն համար 'ի դատարան։

Յօդ. 49. Դատի հրաւիրագիրն երեք օրինակ կ'ըլլայ, մէկն ամբաստանողին և մէկն ամբաստանելոյն տրուելու համար, իսկ երրորդն՝ վերոյիշեալ 45 և 47 և 48 ՐԴ. յօդուածոց տրամադրութեանց համաձայն՝ դատակոչելոյն ստորագրել տրուելէ վերջը, կը յանձնուի հրաւիրող դատարանին և նորա մէկ վաւերացեալ պատճէնն կրնայ ամբաստանողին տրուիլ՝ եթէ խնդրէ, և բնագիրն կը պահուի նոյն դատարանին դիւանին մէջ խնդրոյն վերաբերեալ միւս թղթոց հետ։

Յօդ. 50. Երբ չգիտցուիր թէ դատախազեալն ո՛ւր և ո՛ր քաղաքը կամ գիւղը կը գտնուի և կը բնակի, և նորա մէկ շարժական ինչքը, գոյքը վտանգի մէջ է, կամ զայն ծախելու հարկաւորութիւն կը ծագի, պէտք է դիմել և իմաց տալ Ազգային Պատրիարքարանին կամ Դատական Տեսչութեան, որպէս զի խոհական որոշմամբ անյապաղ 'ի գործ դրուի պարտ ու պատշաճն։

Յօդ. 51. Սոյն չորրորդ գլխոյ պարունակած կանոններն ու տրամադրութիւններն ազգային ամեն կարգի դատարանաց համար գործադրելի են։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

—

Յաղագս դատավարութեան առաջի թաղային Հաշտարար դատարանաց

—

Յօդ. 52. Սոսկ անձնական և շարժական գոյից և ընչից վերաբերեալ պահանջանաց կամ դատերու քննութիւնն ու որոշումն (Տես Յօդ. 4 և 5) ամբաստանելոյն բնակած թաղին Հաշտարար Դատարանին միջոցաւ 'ի գործ կը դրուի։

Իսկ թէ որ ամբաստանեալն ամբաստանողին բնակած տեղը այսինքն՝ թաղը, գիւղը կամ քաղաքը առևտրական ընկերութիւն մը կամ ընկերական մասնակցութիւն կամ գործատեղի մը

ունի, այդպիսի դիպուածի մէջ, խնդիրը կը քննուի և կ'որոշուի ամբաստանողին բնակած թաղին կամ տեղւոյ Հաշտարար դատարանին միջոցաւ։

Յօդ. 53. Եթէ խնդիրն կամ վէճն վերաբերի կամ տան մը, պարտիզի մը, ագարակի մը՝ կամ արտի մը՝ կամ ասոնց բերքերուն հասած ՁԼասուց՝ պահանջից և կամ՝ ասոնց վարձակալներուն սոյն կալուածոց բնակելու կամ մշակելու մասին տեղի դատած արդելքի մը պատճառաւ՝ անվճար մնացած վարձուց պահանջմանց, այդպիսի պարագայներու մէջ դատը կը յանձնուի նոյն կալուածին մօտակայ Հաշտարար դատարանին, որ կը քննէ և կ'որոշէ խնդիրը։

Յօդ. 54. Ամբաստանողն կարող է՝ հարկեցուցիչ պատճառի մը առջև՝ դատի հրաւիրել զդատախազն և ներկայացընել տալ՝ դատարանին հրամանաւ միայն մէկ օր պայմանաժամ տալով, առանց օրինական պայմանաժամը տալու և սպասելու, մինչև իսկ մի և նոյն օրը ներկայացնել տալ՝ երբ ամբաստանեալն կը բնակի ամբաստանողին դանուած թաղին մօտակայ դատարանէն երեք մղոնի չափ հեռաւորութեամբ։ Իսկ եթէ ամբաստանեալն չդտնուիր իւր բնակարանը կամ գործատեղը, կամ նոյն օրը չներկայանայ դատարանին, դատահրաւէրի տուրքերն ու ծախքերն կը մնան 'ի ՁԼասս և 'ի հաշիւ ամբաստանողին։

Յօդ. 55. Ամբաստանողն և ամբաստանեալն կրնան առանց պաշտօնական հրաւիրանաց սպասելոյ ինքնակամ և համահաճ ներկայանալ Հաշտարար դատարանին և դատ պահանջել։ Այս աեսակ պարագայներու մէջ՝ դատաւորք նախ պարտին երկու կողման ստորագրեալ հաւանութիւնն ու յայտարարութիւնը առնուլ, և եթէ դատախազք գրել չգիտնան և կնիք չունենան, ասոնց հաւանութիւնը և գրել չգիտնալը արձանագրութեան մէջ նշանակելէ յետոյ՝ կրնան ընդունիլ նոցա առաջարկը և քննել ու որոշել խնդիրը կամ դատը, և այնուհետեւ դատախազք չունին իրաւունք տրուած որոշման կամ վճռոյն ընդդիմարանելու և վերաքննութիւն պահանջելու, առարկելով թէ՝ նոյն դատարանին դատաւորք իրենց դատին ձեռնհաս դատաւորները չէին, թէ՝ դատարանն ամբաստանելոյն բնակութեանը մօտի դատարանը չէր, թէ՝ դատի ենթակայ եղող ընչից կամ կալուածոց դտնուած տեղւոյն դատարանը չէր են։

Յօդ. 56. Հայոց Թաղային Հաշտարար դատարանք դոնէ չաբաթն անդամ մը պարտին որոշեալ օրերու և ժամու մէջ և յարմար տեղ մը բաց ըլլալ՝ դատախնդրողաց իրաւունս առնելու համար։ Միանդամայն ստիպողական խնդրոց հաշտարար լուծում մը, վերջ մը տալու համար՝ դատաւորք կրնան մարդասիրաբար և աղդասիրաբար դումարուիլ նաեւ իրենցմէ մէկուն առնը, կիւրակէ և ուրիշ օրերը։ սակայն պէտք է որ նոյն յարկին դուռն բաց լինի ունկնդիր հասարակութեան համար, վասն զի եթէ դռնփակ նիստի մէջ որոշում կամ վճիռ տրուի, օրինաց առջեւ զօրութիւն չունենար և անգործադրելի կ'ըլլայ։ Ուրիշ բան է՝ եթէ դռնփակ ըլլալու համար դատախազաց մէջ օրի-

նաւոր եղանակաւ պայման դրուած և ստորագրուած լինի, որով այլ ևս հարկ չմնար դռնբաց և հրապարակաւ դատաստան ընելու։

Յօդ. 57. Երբ ամբաստանողն ու ամբաստանեալը կամ հրաւիրագրով և կամ ինքնակամ՝ որոշեալ օրն և ժամուն անձամբ դատարանը ներկայանան, կամ օրինաւոր փոխանորդ ղրկեն, պարտին ամենայն համեստութեամբ և մեղմութեամբ պատասխանել հարցմանց և փաստաբանել և դատաւորաց արժանեղած մեծարանքն ընել. ինչպէս կը պահանջեն քաղաքավարութիւնն ու կրթութիւնը։

Իսկ եթէ ասոր հակառակ վարմանց մէջ դտնուի ոք, այնպիսին՝ առաջին անգամին համար 'ի կարգ կը հրաւիրուի, և եթէ կրկնէ ու շարունակէ նոյն հակառակ վարմունքը՝ կը դատապարտուի 20 դահեկանէն մինչեւ 50 դահեկան դրամական տուգանաց, նաեւ մինչև երեք օր բանտարկութեան՝ ըստ աստիճանի յանցանաց. և այս վճիռն 'ի տես հասարակութեան կը կախուի դատարանին կամ Թաղական խորհրդարանին սրահը։

Յօդ. 58. Դատախազք իրենց ըսելիքը 'ի ներկայութեան միմեանց բերանացի կը յայտնեն, և խնդիրն կ'որոշուի անմիջապէս։ Իսկ եթէ դատաւորք հարկ տեսնեն և պահանջեն որ դատախազք դրաւոր ներկայացնեն իրենց ըսածը կամ ըսելիքը, այն ատեն խնդրոյն որոշումն կը յետաձգուի դատարանին յաջորդ նիստին։

Յօդ. 59. Եթէ դատախազներէն մէկն ստէ ներկայացեալ գրութիւն մը կամ ուրանայ իւր գիրը կամ ստորագրութիւնը և չճանաչէ զայն, դատարանն յետ արձանագրելոյ ընդդիմութիւնները կը յղէ վէճը պատկանեալ դատարանին հանդերձ տեղեկագրով։

Յօդ. 60. Երբ աղերսարկուն կամ նորա փոխանորդն աղերսը մատուցած թուականէն մինչեւ երեք ամիս հետամուտ չըլլայ իւր դատին, և այս միջոցին մէջ դատին սկզբնաւորութիւնն ու շարունակութիւնը չխնդրեր, մատուցած խնդրագիրն կ'ոչնչանայ։

Իսկ եթէ այս երեք ամսէն յետոյ վճիռ մ'ալ տրուի, անգործադրելի կ'ըլլայ և կոչի կ'ենթարկի. և թէ տրուած վճիռն վերջնական եղած լինի, կրնայ դատապարտելոյ աղերսանացը վերայ վերաքննութիւն Կեդրոնական դատարանին այն սենեկաց առջին, որոց իրաւասութեանը կը վերաբերի խնդիրն։

Յօդ. 61. Վճիռ մը վերջնական կը համարուի նախ՝ երբ վճռեալ գումարն՝ տոկոսիւքն ու ծախիւք և վնասուքն հանդերձ՝ 5000 դահեկանէն վար է, կամ տարեկան եկամուտն 500 դահեկանէն աւելի չեղող ստացուած կամ կալուած լինին պահանջեալքն (Տես Օսմ. Դատաստաժամեայ կանոն Յօդ. 80)։

Երկրորդ՝ երբ դատախազք երկուստէք պայմանագրութեամբ կանխաւ ընդունած են որ վերջնական եղանակաւ դատուին վճիռը արձակող դատարանին միջոցաւ։

Յօդ. 62. Դատի մը վճռագիրն նոյն

դատին վերաբերեալ ասացուածոց, պատկանեալ խնդրոց, քննութեանցն ու արդեանց և հետեւաբար տեղի ունեցող նկատողութեանց, խորհրդածութեանց և պատճառաբանեալ որոշմանց, արձանագրութեանց պատճէնն ըլլալով պարտի պարունակել, նախ՝ դատարանին եաստիճէն անունը, և եթէ կառավարութեան գլխաւոր մը կայ՝ նորա եւս անունը, և հետեւաբար մատուցեալ աղերսանաց և ուրիշ պաշտօնական գրութեանց թուականները, թուահամարները, ստորագրութիւնները և պարունակութեանց համառօտ նիւթերը։

Երկրորդ՝ դատախազից անձամբ և թէ փոխանորդաց միջոցաւ դատարանի ըրած յայտարարութիւններն ու եզրակացութիւնները և մատուցած պարտմուրհակաց, պայմանագրութեանց և ուրիշ տեսակ թղթերու ամբողջ պարունակութիւնները կամ կցեալ պատճէնները։

Երրորդ՝ եթէ վկայք լսուած ըլլան, իւրաքանչիւրին անունները, մականունները կամ զբաղմունքին, տարիքին, ծննդատեղին, արուեստը, բնակարանը և վկայաբար ըրած խօսքերը։

Չորրորդ՝ դատաստանութիւններէն և քննութիւններէն առաջ եկող որոշելի կէտերուն որոնք ըլլալը։

Հինգերորդ՝ իւրաքանչիւր կէտին նկատմամբ դատարանին մէջ եղած վիճաբանութիւններէ յետոյ խորհրդածութեանց համառօտութիւնը, եզրակացութիւնը և վերջապէս տրուած իւրաքանչիւր որոշման ո՛ր օրինական յօդուածի համաձայն լինելը։

Վեցերորդ՝ դատապարտեալ կողմէն վճարելիք դումարին և տոկոսներուն քանակութիւնը, նաև դատական ծախուց և տուգանաց դումարները, անօրինելով՝ որ յետոյ դատը կորսնցնողին հատուցանել տալու դաշամբ՝ դատը վաստակողն կանխաւ վճարէ զայնս։

Եօթներորդ՝ որոշման կամ վճռոյն միաբան հաւանութեամբ կամ ձայնից մեծամասնութեամբ տրուած լինելը, որ թուականին տեղի ունեցած ըլլալը և դատավարաց երկու կողմին միոյն կամ զդատը վաստակողին բերանացի հաղորդուած լինելը։

Յօդ. 63. Վճռագիր մը դատապարտելոյն օրինաւոր եղանակաւ հաղորդուած օրէն հաշուելով՝ դատը վաստակողն իրաւունք ունի նորա գործադրութիւնը անմիջապէս պահանջելու. իսկ եթէ թոյլ տալով չթախանձէ նորա գործադրութիւնը, և այդպիսի դիպուածի մէջ չաբսունակ վաթսուն և մէկ օր անցնելով՝ դատապարտեալն ալ չբողոքէ և վճռագրոյն վերաքննութիւնը չխնդրէ, յիշեալ վաթսուն և մէկ օր պայմանաժամն աւարտելէն յետոյ՝ Բարձրագոյն դատարանին կամ նորա ձեռնհաս ատենին դիմելու իրաւունքը կը կորսնցնէ։ (Տես Յօդ. 181 Օսմ. Դատ. առժամեայ կանոն) (Դէոէլէթ) Վճռագրոյն հաղորդուած օրը և կամ յիշեալ պայմանաժամին աւարտած օրը սոյն 61 օրէն դուրս է)։

Յօդ. 64. Թէ՛ առաջին ատիճանի դատարանէ մը և թէ՛ Բարձրագոյն դատարանի ատեանէ մը վերջնական որոշմամբ տրուած և կամ 'ի բացակայութեան դատախազից՝ մէկին կամ միւսին՝ երկիցս տրուած վճռագրի մը մի և նոյն դատարանին միջոցաւ նորաքննութիւն

կրնայ խնդրուիլ յետագայ դիպաց մէջ։

Ա. Երբ չպահանջուած գումարի կամ բանի մը հատուցման համար որոշում կամ վճիռ տրուի։

Բ. Եւ հետեւաբար, երբ պահանջուած գումարէն կամ բանէն աւելի բան մը հատուցանելու համար որոշում կամ վճիռ գոյանայ։

Գ. Երբ պահանջանց մին կամ մէկ քանին անորոշ ձգուի։

Դ. Երբ խնդրոյ մը նկատմամբ տրուած վճռէն յետոյ՝ առանց դատախազներուն անձամբ կամ իրաւասութեամբ տարբերութիւն կրելու, կամ նոր պահանջ մը յարուցանելու դատը նոյնութեամբ նորաքննուի և առաջին որոշման հակառակ որոշում տրուի։

Ե. Երբ մէկ վճռագրոյ մէջ միմեանց հակառակ երկու որոշում կամ վճիռ տրուի։

Զ. Երբ դատի մը քննութեան միջոցին աղերսամատոյց դատախազի հակառակորդին կողմէ այնպիսի խաբէութիւն մը գործադրուի որ դատաւորին վրայ ազդելով՝ նորա տալու որոշման փոփոխութիւն պատճառած լինի։

Է. Երբ 'ի նպաստ դատին առաջ բերուած գրութեան մը չինծու ըլլալն խնդրոյն որոշումէն յետոյ երեւան ելնէ։

Ը. Երբ դատին որոշման նպաստելու կարող պայմանագիր կամ հաշուետետր կամ թուղթ մը հակառակորդ կողմէն պահուած կամ պահել տրուած ըլլալով՝ որոշումէն յետոյ ձեռք բերուելով մատուցուի 'ի դատարան։

Թ. Երբ որոշում մը համաձայն չլինի դատավարական օրինաց այն յօդուածոց, որոնց, կամ խնդրոյն դատա-

քննութեան միջոցին և կամ որոշումէն յառաջ, չհնազանդելու և չհամակերպելու պատճառաւ վճիռը անվաւեր ու անընդունելի կ'ըլլայ, և դատապարտելոյն վախճանած լինելովն ընդդիմութիւն ընելու օրինաւոր պայմանաժամը լրութեամբ անցած չըլլալով՝ ընդդիմութեան իրաւունքն ոչնչացած չըլլար։

Ժ. Երբ ինչպէս Տէրութեան կամ կուսակալութեան մը, նոյնպէս ազգային Վարչութեան կամ Առաջնորդութեան մը և կամ գիւղի մը բնակիչներու, և կամ տէրութեան կամ ազգին հրիտակեալ բարեպաշտական կալուածոց, նաև որբերու դէմ դատ վարուելով նոցա իրաւանց պաշտպանութեան համար իրենց կողմէն ներկայութիւնն անհրաժեշտ եղող փոխանորդ կամ խնամակալ կամ հոգաբարձու մը դատին ներկայ չգտնուի։ (Տես Յօդ. 202 Օսմ. Դատ. առժամեայ Կանոն)

Յօդ. 65. Կամ Բարձրագոյն դատարանէն տրուած՝ և կամ Կեդրոնական վերջնական վճիռներուն, նաեւ Հաշտարար դատարաններուն կողմերէն տրուելով վերաքննութեան պայմանաժամը կատարուած ըլլալուն համար վերջնական վիճակի հասած վճիռներուն բեկումը պահանջողք՝ պարտին իրենց ընդդիմաբանական աղերսագիրը մատուցանել՝ յետագայ պայմանաժամերու մէջ։

Ա. Բարձրագոյն դատարանի ատեանէ մը տրուած վճռագրոյն օրինաւորապէս հաղորդուելուն թուականէն հաշուելով 90 օր պայմանաժամու մէջ եթէ բեկումը խնդրուած վճիռն 'ի ներկայու-

թեան դատախազի և դատախազելոյն տրուած համայնանուած է։

Բ. Իսկ եթէ բարձրագոյն դատարանէն Ատենի մը վճռագիրն 'ի բացակայութեան կամ դատախազին և կամ դատախազելոյն տրուած ըլլայ, այդպիսի վճռագրոց հաղորդուելէն յետոյ ընդդիմութեան համար տրամադրեալ օրինաւոր պայմանաժամուն լրացող օրէն հաշուելով՝ 90 օրուան մէջ վճռաբեկումը պահանջելու է։

Գ. Եթէ վճիռն կեդրոնական սենեկաց և Հաշտարար դատարանաց կողմէն 'ի ներկայութեան երկու կողմի դատավարաց տրուած ըլլայ, վճռաքննութեան 61 օր պայմանաժամը լրանալու օրէն հաշուելով՝ 90 օրուան մէջ պահանջելու է վճռաբեկումը։

Դ. Եթէ 'ի բացակայութեան մէկ կամ միւս կողմին տրուած ըլլայ վճիռն, 90 օրեայ պայմանաժամն կսկսի այն օրէն, յորում թէ՛ ընդդիմութեան և թէ վճռաքննութեան պայմանաժամերն հետզհետէ կը լրանան։

Ե. Եւ եթէ վճռաբեկում խնդրողն կամ դատապարտեալն վախճանի, վերոյիշեալ պայմանաժամերն կ'սկսին հաշուիլ վճռագրոյն նորա ժառանգորդաց հաղորդուած օրէն։

Եւ այդ պայմանաժամերուն կատարումէն ետքը, վճռաբեկի համար մատուցեալ խնդրագիրք անընդունելի են։ (Տես Յօդ. 219 Օսմ. Դատ. առժամեայ կանոն)

Յօդ. 66. Երբ դատի մը համար դատարանին կողմէ որոշեալ օրն ու ժամուն դատախազներէն մէկ կողմն չներկայանար դատարանին, դատաւորք կը-նան 'ի բացակայութեան նորա՝ 'ի դատարան ներկայ գտնուող ունկնդիրներէն մէկը յայնմ պահու փոխանորդ կարգել 'ի դիմաց բացակային (Տես Յօդ. 1791 Մէճէլլէ)։ ԵՒ նորա փոխանորդութեամբ և օրինաւոր միջոցաւ հրաւիրեալ և ներկայ գտնուող միւս կողմին խնդրանացն և պահանջմանը վրայ խնդիրն որոշել ու վճռել, դատախազին ցոյց տուած դրութիւնները տեսնելէ և յառաջ բերած փաստերն ու ներկայած վկայները և առժամեայ կարգեալ փոխանորդին ընդդիմաբանութիւնները լսելէ ետև։ Իսկ եթէ յայնմ պահու փոխանորդելու մէկն չի գտնուի, դատարանն նոյնպէս կրնայ խնդիրը քննել, զննել, որոշել և վճռել։ Սակայն այսպիսի պարագայից առթիւ տրուած վճռագրոց մէջը պէտք է բոլոր եղելութիւնը ծանուցուի, թէ՝ ըստ խնդրանաց այսինչ կողմին և այս ինչ անուն անձին առժամեայ փոխանորդութեամբ, կամ առանց փոխանորդի քննուած և որոշուած է խնդիրն և տրուած է վճիռն՝ 'ի բացակայութեան միւս կողմին։

Յօդ. 67. Ի բացակայութեան մէկ կողմին, միւս կողման Հաշտարար դատարանէն ստացած վճռագրոյն մէկ վաւերացեալ պատճէնն օրինաւոր եղանակաւ, այսինքն՝ եկնակոչերը հաղորդելու վերաբերեալ օրինաց համաձայն եղանակաւ (Տես Յօդ. 44 էն ցետ), դատապարտելոյն հաղորդուած թուականէն սկսեալ մինչև 7 օր անգործադրելի է, եթէ առժամանակեայ գործադրութիւնն որոշուած չըլլայ։

Սոյն եօթնօրեայ պայմանաժամն չի լրացած, դատախազեալն իրաւունք ունի բնելու և ընդդիմութիւն դատարանին

աղերսելով վերաքննութիւն խնդրելու, յայտնելով։ սակայն, աղերսագրոյն մէջ, այն պատճառներն, որք իրաւունք և առիթ տուած են իրեն վերաքննութիւն պահանջելու։

Յօդ. 68. Երբ բացակայ կողմին բարեկամներն ու ծանօթներն կամ ազգականք դատի համար որոշեալ օրն ու ժամուն դատարանին ներկայանալով՝ խնդրոյն 'ի բացակայութեան քննուելու միջոցին յայտարարեն և վկայեն որ բացակայ կողմն հիւանդութեան և կամ այլ արգելիչ պատճառով մը և կամ հրաւէր ստացած չըլլալուն աղսդաւ չէ ներկայացած, այն ատեն դատաւորք կրնան խնդրոյն քննութիւնն ու որոշումը յետաձգել մինչև 8 օր, խնդիրը յաջորդ շաբթուն նոյն օրի նստին ձեռք առնելու պայմանաւ, այսինքն՝ եթէ օրն երեքշաբթի է դարձեալ յաջորդ շաբթուան երեքշաբթի օրն քննութիւն ընել և վճռել տալ։ Իսկ եթէ դատաւորք, առանց 'ի նկատի առնելոյ բացակային բարեկամացը կամ ծանօթացը և ազգականացը յայտարարութիւնը ու վկայութիւնը, խնդիրը քննեն ու որոշեն՝ առանց յաջորդ շաբթուան յետաձգելու, դատապարտեալն իրաւունք կունենայ՝ վճռոյն գործադրութեանը համար տրուած 7 աւուր պայմանաժամին լրանալէն վերջն ալ ընդդիմութիւն ընել և անոր վերաքննութիւնը խնդրել՝ առանց երաշխաւորատալու, բացատրելով, սակայն, աղերսագրին մէջ բացակայ մնացած ըլլալուն ո՛ և է արգելիչ պատճառները։

Յօդ. 69. Երբ մէկն իր բացակայութեան տրուած վճռոյն վերաքննութիւնը պահանջած ըլլալով հանդերձ՝ դարձեալ դատարան ներկայանայ, և դատարանն 'ի բացակայութեան նորա՝ իր նախորդ վճիռն հաստատէ, կրկին անգամ դատապարտեալն այնուհետեւ իրաւունք չունենար ընդդիմութիւն ընելու. սակայն աղատ է 1. յօդուածին Զ. և Է. պարբերութեանց տրամադրութեանցն համաձայն՝ օրինաւոր եղանակաւ երաշխաւոր տալով կոչ ընել՝ խնդիրը կամ վէճը վերստին քննել տալու համար Կեդրոնական դատարանի այն սենեկին առջեւ, որու կը պատկանի խնդիրն։

Յօդ. 70. Թաղային Հաշտարար դատարանաց կողմէ կեդրոնական դատարանի սենեկաց փոխադրեալ դատերն 'ի սկզբանէ կը քննուին՝ իբրև նոր դատ։

Սակայն դատելոց խոստովանութիւններն ու յայտարարութիւններն, որք եղած են առաջի Հաշտարար դատարանաց, առ ոչինչ չեն համարուիր, մինչև որ քննութեան կամ վճռագրոյն մէջ աւելի կամ պակաս գրութիւն մը կամ նենգութիւն մը սպրդած ըլլալը աղերսագրին մէջ կանխաբար յիշուած ըլլալով չպահանջուի և հետևաբար չապացուցուի։

Յօդ. 71. Երբ թաղային Հաշտարար կամ ազգային դատարանաց ներկայացեալ խնդիրները կամ վէճերը պարզելու համար խնդրոյն բնութեանը համաձայն՝ հմուտ և ձեռնհաս անձանց միջոցաւ քննութեան պէտք զգացուի, դատարանն յանձնաժողովոյ մը կազմութիւնը կորոշէ որոյ անդամք՝ իբրև միջնորդ դատաւորք երկու կողմի առաջարկութեամբը և դատարանին հաւանութեամբը կ'ընտրուին և կը հաստատուին։ Իսկ եթէ դատախաղներէն կամ դատախազին կամ ամբաստանեալին կողմէն և կամ երկու

կողմին ալ ընդդիմութիւն յարուցանելովը կամ անփոյթ կենալովը յանձնաժողովին համար իրենց կողմէն անդամ չառաջարկեն, դատարանն ուղղակի իւր կողմէն կ'ընտրէ երկու կամ չորս անձինք, որոց վրայ աւելցնելով դատարանին դատաւորներէն մին՝ կը կազմուի յանձնաժողովը, որոյ անդամոց դատարանէն հրահանգագրով մը արտօնութիւն և հրաման կը տրուի՝ խնդիրը իւր ամեն խոչ ու չփոթ մանրամասն պարագայիւքը քննելու, զննելու, հաշիւները և թղթերը տեսնելու և դիմաւորելու ու ստուգելու, անձանց վկայութիւնները լսելու 'ի ներկայութեան դատախազից, նաև 'ի կամաւոր բացակայութեան ընդդիմող կամ չհամակերպող դատախազից։

Յօդ. 72. Երբ դատախազներէն մին կամ միւս ընդդիմութիւն ընելով կամ չհամակերպելով յանձնաժողովին ներկայանայ, յանձնաժողովը դատարանին միջոցաւ հրաւիրագիր կ'ուղղէ՝ ազդարարելով որ՝ բացակայողն որոշեալ յառաջիկայ նիստին կամ դումարման օրը և պահուն ներկայանայ յանձնաժողովին և պաշտպանէ իւր իրաւունքը։

Եւ եթէ հրաւիրեալ բացակայն դարձեալ չներկայանայ, այն ատեն յանձնաժողովը՝ 'ի բացակայութեան նորա՝ կը քննէ ու կը զննէ խնդիրը՝ իւր բոլոր պարագայներովը, և խնդրոյն քննութեան ու զննութեան միջոցներուն լսուած դատաստանագրութիւնները, տեսնուած գրութիւնները և երեւան եկած կէտերը և տեսակէտերը մի ըստ միոջէ և հետզհետէ երկու օրինակ արձանագրուելով՝ ստորագրուելու և իւրաքանչիւր օրինակն իւրաքանչիւր կողմի դատաւորներէ մէկուն

ձեռք մնալու է, և հետեւաբար վճռագրոյն մի պատճէնն կամ կցեալ կամ ընդօրինակեալ լինելով՝ պատճառաբանեալ որոշմամբ, այսինքն՝ օրինաց յօդուածներն յիշեալ լինելով հանդերձ՝ դատարանին ներկայացնելու է, ապա թէ ոչ վճիռն ոչինչ կը համարուի։

Միջնորդ դատաւորաց գործառնութեանց վարձքն ու արձանագրութեանց, նաև տեղեկագրոյն ծախքերն կանխաւ կէս առ կէս կը վճարուին երկու կողմէն, և ապա դատապարտեալն կը տուժէ իրաւունք ստացողին կանխաւ վճարած մասը։

Իսկ եթէ երկու կողմէն մին ընդդիմութիւն ընելով կանխաւ չվճարէ իւր բաժնին ինկածը, միւս կողմն կը վճարէ որպէս զի խնդիրն չյետաձգուի, և յետոյ կը պահանջէ զայն դատապարտեալէն։

Յօդ. 73. Եթէ թաղային հաշտարար դատարանէ մը վերջնական կերպով տրուած վճռոյ մը դէմ՝ իւր հակառակ օրինաց՝ բողոք և ընդդիմութիւն տեղի ունենայ, խնդիրն՝ օրինաց համեմատ, Բարձրագոյն դատարանին պատկանեալ Ատենին յղուելով՝ հոն նկատողութեան կ'առնուի, որպէս զի, եթէ տրուած վճիռն օրինաց հակառակ և արդարութեան անհամաձայն գտնուի, խնդիրն յանձնուի 'ի վերաքննութիւն կեդրոնական դատարանի այն սենեկին՝ որու կը պատկանի։

Յօդ. 74. Իսկ վերաքննութիւնն ուղղակի կը յանձնուի այն սենեկին՝ որու կը վերաբերի խնդիրն, երբ վճռեալ դումարն կամ դատն 5000 դահեկանէն աւելի արժէք ունենալնուն համար՝ վճիռն վերջնական չհամարուի։ (Տես Յօդ. 61)

Յօդ. 75. Երբ դատարանի մը ատենապետն բացակայի, նոյն դատարանի կայուն և 'ի հարկին՝ օգնական խորհրդականներէն աստիճանաբար առաջնութիւն ունեցողն կ'ատենապետէ փոխանորդաբար։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ցաղագս վկայութեանց

Յօդ. 76. Երբ դատախազներէն մին՝ խնդիրը կամ վէճը պարզելու և լուսաբանելու և իւր իրաւունքը հաստատելու և ապացուցանելու համար վկայ ներկայացնելու հարկին մէջ գտնուի, պէտք է նախ՝ իւրաքանչիւր վկային անունը մականունը, ուր տեղացի ըլլալը, արուեստը կամ զբաղմունքը, ինչպէս նաև գործատան կամ բնակարանին թաղը, փողոցը և թիւը, նոյնպէս իւր և վկային մէջ տեղ ազգակցութիւն և ուղղակի կամ անուղղակի առևտրական յարաբերութիւն գտնուիլն կամ չգտնուիլն երդմամբ ծանուցանելով արձանագրել տալ դատաւորին։

Սակայն եթէ վկայ բերելու իրաւունք ունեցող կողմն ըսած ըլլայ թէ ամենեւին վկայ չունի, և յետոյ վկայներու անուններ տալու կամ վկայներ բերելու ըլլայ, ընդունելի չեն վկայները։ (Մէճէլլէ 1753)

Երկրորդ՝ դատարանին որոշեալ օրն ու ժամուն ներկայացնել իւր վկայները,

Երրորդ՝ վկայները դատարանէն դուրս տեղ մը սպասել տալ։

Չորրորդ՝ եթէ կարգն դայ վկայութեանց լսուելուն, վկայներէն նախ մին

ներս մտնէ և խոստանալով որ անաչառապէս ճշմարիտը պիտի խօսի և վկայէ և առ այս՝ իւր անունը, մականունը, ծննդեան տեղը, արուեստը կամ զբաղմունքը, գործատան և բնակարանին թաղը, փողոցն ու թիւերը, իւր և զինքը 'ի վկայութիւն հրաւիրողին մէջ տեղ ազգակցութիւն և ուղղակի կամ անուղղակի առևտրական յարաբերութիւն գտնուիլն կամ չգտնուիլը և այնուհետև իրեն եղած հարցմանց ճշմարտութեամբ պատասխանելը երդմամբ հաստատելէ և խոստովանելէ յետոյ՝ իրեն ուղղեալ հարցմանց ստուգապէս պատասխանէ, և այն մասին գիտցածը անաչառութեամբ հաղորդէ և վկայէ, և ապա ըրած վկայութեանց և յայտարարութեանց արձանագրութիւնը ընթեռնլով՝ զայն ստորագրէ. իսկ եթէ վկայն կարդալ ու գրել չգիտեր, երկու պատուաւոր անձինք յանուն և 'ի դիմաց վկային երդմամբ վկայեն արձանագրութեան ճշդութեանը ինչպէս նաև հաստատեն վկային խաչանիշ կամ մատնանիշ ստորագրութիւնը։

Հինգերորդ՝ արգիլուած է այն վկային դատարանէն դուրս ելնել՝ մինչև որ միւս բոլոր վկայից վկայութիւնները ևս առնու դատարանն. և հարկ է որ իւրաքանչիւր հարցաքննեալ վկայք ներսը մնան, որպէս զի միւս վկայից հետ խօսակցելու միջոց և պատեհութիւն չունենան։

Վեցերորդ՝ միւս վկան՝ որ դատարան մտնող ելնող անձանց յարաբերութենէ զուրկ՝ տեղ մը կսպասէ. դատարան կոչուելուն ներս կը բերուի և վերոգրեալ պարբերութեանց տրամադրութեանցն համաձայն կը տնօրինուի, և այս կերպով վկայներն հետզհետէ իրենց պաշտօնը կը կատարեն։

Յօդ. 77. Վկայները ներս մտցնող պաշտօնեայն ևս պէտք է կրդուեալ ըլլայ, դատարանին մէջ լսած վկայութիւնները միւս վկայներուն չհաղորդելու համար. և դատաւորք պարտին ամենայն հսկողութիւն 'ի գործ դնել, որպէս զի դուրսն եղող վկայներն տեղեկութիւն չստանան բնաւին թէ ներսի վկայն ինչ կերպով վկայութիւն տուաւ։

Յօդ. 78. Ինչպէս դատաւորք նոյնպէս դատախազք կամ նոցա փոխանորդք կարող են երդուեալ վկայները քննել հետզհետէ առաջի դատարանի, զի դատարանէն դուրս եղած վկայութիւնն անընդունելի է (Տես Մէճէլլէ Յօդ. 1867) և խնդրոյն կամ դատին վրայօք հարցումներ ուղղել վկայից. պարտաւոր են յետագայ հատուածոց համաձայն ճշդիւ և արդարութեամբ պատասխանել ամենուն՝ առանց լռութիւն պահելու, որպէս զի օրինաւոր ըմբռնուին իրենց վկայութիւնքն։ (Մէճէլլէ 1705)

Յօդ. 79. Վկայք ականատես և ականջալուր ըլլալու են։ (Մէճէլլէ 1688)

Յօդ. 80. Երկու անձանց վկայութիւնն հարկաւոր լինելով՝ մէկուն տեղ երկու կանայք կրնան լսուիլ։ (Մէճէլլէ 1685)

Յօդ. 81. Իսկ երբ խնդրոյ մը մէջ արանց վկայութիւնն անյարմար լինի, կանանց վկայութիւնն կարևոր է։ (Մէճէլլէ 1665)

Յօդ. 82. Կոյրերու, ինչպէս նաև համրերու վկայութիւնք անընդունելի են։ (Մէճ. 1686) (Տես Յօդ. 116)

Յօդ. 83. Երբ վկայութիւնն վերաբերի 'ի նպաստ կամ ընդդէմ վախճանեալ անձի մը, վկայն պարտի նորա հօրն ու մօրն և նոցա նախածնողաց ևս ո՛վ ըլլալը ծանուցանել։ (Մէճ. 1690)

Յօդ. 84. Երբ վկայութիւնն կալուածոց վերաբերի, վկայն պարտի նոյն կալուածոց սահմանակից կալուածներու որոնց ըլլալը ծանուցանել։ (Մէճ. 1691)

Յօդ. 85. Երբ դրամական խնդրոյ մէջ պարտուց կամ պահանջից մէկ մասը հատուցեալ լինելով՝ անվճար մնացած մասին քանակութիւնը չգիտեր վկայ մը, նորա վկայութիւնն անընդունելի է։ (Մէճ. 1695)

Յօդ. 86. Վախճանելոյ մը հակառակ տրուած վկայութիւնն ընդունելի և վստահելի չհամարուիր։ (Մէճ. 1698)

Յօդ. 87. Ծնողաց և զաւակաց, նաև եղբարց, քերց ու ամուսնացելոց մէջ 'ի նպաստ միմեանց եղած վկայութիւնն ընդունելի չէ։ Իսկ ուրիշ աստիճանի աղգականաց, ինչպէս նաև բարեկամաց մէջ 'ի նպաստ միմեանց եղած վկայութիւնք ընդունելի կը համարուին։ (Մէճէլլէ 1700-1701)

Յօդ. 88. Իսկ իրարու հակառակորդ կամ թշնամի անձերէն մէկին ընդդէմ միւսին ըրած վկայութիւնն ընդունելի չէ։ (Մէճ. 1702)

Յօդ. 89. Անձ մը միանգամայն ամբաստանիչ և հետևաբար իր անձին սեպհական իրողութեան չկրնար վկայ լինիլ։ (Մէճ. 1703 և 1704)

Յօդ. 90. Վկայութիւն մ'ընդունելի ըլլալու համար՝ իրողութեան նպատակը ճշդելու է և ոչ թէ վկային տեսակե-

տերը յառաջ բերելու է։ (Մէջ. 1706)

Յօդ. 91. Պահանջեալ գումարի մը կամ ուրիշ բանի մը մէկ մասն պահանջողին իրաւունքն ըլլալուն եղած վկայութիւնն՝ միայն նոյն մասը պահանջողին իրաւունքն ըլլալը կը հաստատէ։ (Մէջ. 1707)

Յօդ. 92. Երբ պարտքի մը ուսկից յառաջ եկած ըլլալուն նկատմամբ տրուած վկայութիւնն սխալ ըլլայ, նոյն պարտքն չհաստատուիր։ (Մէջ. 1711)

Յօդ. 93. Երբ վկայութեանց մէջ հակասութիւն տեսնուի, վկայութիւնք ընդունելի չեն համարուիր։ (Մէջ. 1712)

Յօդ. 94. Դատը վճռելէ յառաջ՝ դատաւորաց պարտքն է՝ վկայից պատուոյ և վստահութեան արժանի անձինք ըլլալնուն վրայօք մանրամասն տեղեկութիւններ, այսինքն՝ վերոյիշեալ յօդուածոց տրամադրութեանցն համեմատ վկայութիւններ ստանալ։ (Մէջ. 1717)

Յօդ. 95. Եթէ խնդրոյ մը դատին մէջ լսուած վկայներն ըստ ամենայնի վստահութեան արժանի անձինք ըլլալնին հաստատուելէ յետոյ՝ վեց ամիս ժամանակ անցնի, նոյն անձանց որ և է նոր խնդրոյ մը վրայ վկայութիւն ըրած ժամանակ՝ իրենց պատուաւոր և վստահութեան արժանի անձինք ըլլալնին վերատին հաստատուելու է՝ ընդունելի վկայութիւններով։ (Մէջ. 1723)

Յօդ. 96. Դատավարներէն մէկ կողման յառաջ բերած վկայներու թիւն՝ միւս կողմի վկայներու թիւէն մեծագոյն լինելն չի կրնար պատճառ ըլլալ նոյն վկայութեան նախամեծար և նախադասելի համարուելուն, եթէ նոյնպէս բազմահռչակ չլինի։ (Մէջ. 1732)

Յօդ. 97. Եթէ վկայք իրենց վկայութիւնը տալէ յետոյ սուտ խօսած ըլլալնին երևան ելնէ կամ իրենք խոստովանին, բայց առաջին վկայութեան վրայ դատարանէն որոշում և վճիռ տրուած ըլլայ, բայց 'ի պատժապարտութեան և խրատու խնդրոց մէջ, վճիռն չփոխուիր։ Սակայն վկայք տուգանայ և պատժոյ ենթակայ լինելով կը դատապարտուին արդէն վճռեալ գումարը կամ դոյքը հանդերձ տոկոսեօք և դատական ծախիւք հատուցանելու։ (Տես Մէջ. Յօդ. 80 և 1729) Այսու ամենայնիւ եթէ վկայներն՝ յետ վճռոյ՝ նահանջեն կամ հակառակ վկայեն, միասուց հատուցման չեն դատապարտուիր՝ եթէ արդէն վճռեալ գումարին մնացորդն ենթակայ եղած տրոց հաւասար է. իսկ թէ որ աւելորդ է, ընկրկող վկային կինայ՝ եթէ մէկ անձ մ'է, և հաւաքաբար՝ եթէ մէկէն աւելի է։ (Տես Մէջ. 1730)

Իսկ պատժոյ կամ խրատու մասին դալով՝ տես յետագայ յօդուածները (Յօդ. 103)

Յօդ. 98. Ով որ սոսկ քաղաքային, այսինքն՝ անհատական, ամուսնական և վարչական խնդիրներու մէջ սուտ վկայութեան յանցանք գործած ըլլայ, առսակաւն վեց ամիս և առ առաւելն տարի մը բանտարկութեամբ կը պատժուի։ (Տես ՃԷղա դան. Հիմ. Յօդ. 209)

Յօդ. 99. Ով որ սուտ վկայութիւն ըրած և ատոր համար դրամ առած է պիտի դատապարտուի առածին կրկնապատիկը հատուցանելու և թէ՝ դրամը վճարողն և թէ՝ առնողն պիտի պատժուին՝ կաշառաբերկութեան վերաբերեալ օրինաց համեմատ տուգանք վճարելով և

չատ տարիներ բանտարկութեամբ, նաև պաշտօնանկութեամբ և յաւիտեանս պաշտօնազրկութեամբ՝ եթէ վարչութեան պաշտօնեայ է։ (Տես ճէզա դան. Հիւմ. Յօդ. 210, նաև Յօդ. 67 մինչև 81)

Յօդ. 100. Ով որ բռնութեամբ արդիլած ըլլայ ճշմարիտ վկայութեան մը տրուիլը, կամ թախանձանօք սուտ վկայութիւն ընել տուած լինի, պիտի կրէ նոյն պատիժները, զորս վկայք կը կրեն իրենց մեղապարտութեանց աստիճաններուն համաձայն։ (Տես Յօդ. 211 ճէզա դան. Հիւմ.)

Յօդ. 101. Երբ քաղաքային խնդրոյ մը դատին մէջ, ամբաստանեալ անձն իրեն ձգուած երդումն ընդունելով սուտ խօսի և սուտ երդումն ըրած ըլլայ, կը դատապարտուի, առաջի հասարակութեան հրապարակաւ յանդիմանութեան և միանգամայն առ նուազն վեց ամիս բանտարկութեան։ (Յօդ. 212 ճէզա դան. Հիւմ.)

Յօդ. 102. (Բաղադրիչ) միայն եկեղեցականք ազատ են հրապարակաւ յանդիմանութենէ, ըստ արքունի հրամանի թուագրեալ 17 զիլհիճէ 1278 կամ 2/14 յունիս 1862. բայց ենթակայ են միւս պատիժներու, նաև տուգանաց՝ եթէ դատապարտուին։

Յօդ. 103. Երբ դատի մը մէջ վկայութիւն ընող անձը սուտ խօսի և սատխօսութիւնն երևան ելնէ, իրը երդմնազանց և սուտ վկայ՝ միւս կողմին պատճառած վնասուց և տուգանաց և ուրիշ պատժոց կ'ենթարկի, և նորա վկայութեան վրայ յենլով տրուած վճիռն ուրիշ խնդիրն վերաքննելի կ'ըլլայ՝ թէ որ ըրած

սուտ վկայութեան մէջ վկայները բերողին մատնակից ըլլալն երևան ելնէ։

Յօդ. 104. Ի դատարան ներկայ գըտնուող ունկնդիրք պարտաւոր են լռութիւն պահել, քաղաքավարութեամբ վարուիլ և երբէք որ և է խօսքով կամ ցոյցով չմիջամտել դատավարութեան։ Ասոր հակառակ վարուողներն 'ի կարգ կը հրաւիրուին առաջին անգամուն, յանդիմանութիւն կը կրեն՝ եթէ կրկնեն, իսկ եթէ դարձեալ շարունակեն օրինազանցութիւնը, դատարանէն դուրս հանուելու, նաև բանտարկութեան կը դատապարտուին՝ ըստ աստիճանի յանցանաց։

Յօդ. 105. Նախընթաց 52, 53, 56, 57, 58, 62 65, 68, 70, 72 և 74 և հետևորդ յօդուածներն Աղդային կեդրոնական սենեկաց և Բարձրագոյն դատարանի ատեաններուն առջև ալ գործադրելի են։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Երդման եղանակին վրայ

Յօդ. 106. Դատավճռոյ մը պատճառներէն մէկն ալ երդում ընել կամ երդումէ ընկրկիլ կամ հրաժարելն է, այսինքն՝ երբ դատախազ մը անկարող է իւր դատը հաստատել, ըստ իւր պահանջման՝ դատախազելոյը երդումի կը քաշուի։

Բայց երբ մէկն ամբաստանուի՝ իրը փոխանորդ ուրիշ անձի մը՝ և ուրանայ երդման չներքևիը։ Նոյնպէս երբ անձ մը երկու տարբեր անձէ ամբաստանուի իրը թէ ձեռքերնին եղած ապրանքը նոյն անձէն գնած են, և նա մէկուն ծախած

ինեն հաստատէ բայց միւսինը ուրանայ երդումի չենթարկուիր։ (Մէճ. 1742)

Յօդ. 107. Երբ ոսոխներէն մին երդման ենթարկուի, յանուն Աստուծոյ պիտի երդնու։ (Մէճ. 1743)

Յօդ. 108. Միայն դատաւորի կամ նորա փոխանորդի ներկայութեան կրնայ երդումն լինիլ. ուրիշի ներկայութեան եղած երդումն կարևորութենէ զուրկ է։ (Տես Մէճ. 1744)

Յօդ. 109. Դատական փոխանորդք կրնան ոսոխներուն երդում առաջարկել բայց երբ երդումն իրենց կինայ, փոխանորդք երդման չենն ներքեւիր, այլ դործին տէրն պէտք է երդնու։ (Մէճ. 1745)

Յօդ. 110. Երդումը միայն ոսոխի մը պահանջմամբը կրնայ տեղի ունենալ. բայց յետագայ չորս պարագայներու մէջ՝ առանց ոսոխի պահանջման՝ երդում կ'առաջարկուի դատաւորի կողմէ.

Ա. Երբ մէկն ժառանգութենէ իր բաժնին ինկած իրաւունքը պահանջէ և հաստատէ, դատաւորն երդում կ'առաջարկէ դատախազին՝ նոյն իրաւունքը վախճանեալէն որ և է եղանակաւ առած իրաւախոհ եղած կամ ուրիշի մը վրայ փոխանցած կամ ուրիշէ մը վճարեալ՝ կամ՝ նոյն իրաւանց փոխարէն հանդուցեալէն դրաւ մը առած չըլլալուն։

Բ. Երբ մէկը ստացուածքի մը վրայ իրաւունք ձեռք բերէ և հաստատէ, նոյն ստացուածքը ո՛ և է մէկու մը ծախած կամ նուիրած և կամ ո՛ր և է եղանակաւ իր ստացուածոց կարգէն հանած չըլլալուն։

Գ. Նոյնպէս երբ գնորդ մ'առած ապրանքը ունեցած թերութեան համար

մերժէ, դատաւորն երդում կառաջարկէ մերժողին՝ նոյն ապրանքը՝ թերութիւնը գիտնալով հանդերձ գնած չըլլալուն, և կամ բանիւ կամ գործով գընած իրին հաւանութիւն տուած և զայն ընդունած չըլլալուն։

Դ. Նոյնպէս երբ կալուածակցի (շէֆիլի) մը հետ դատ վարել հարկ լինի նոյն կալուածակիցն իր ունեցած իրաւունքը, որ և է եղանակաւ ոչնչացուցած չըլլալուն համար։ (Տես Մէճ. 1746)

Յօդ. 111. Առանց դատաւորէ երդում առաջարկուելու դատախազելի մը ըրած երդումն ընդունելի չէ, և հարկ է որ դարձեալ երդման հրաւիրուի դատաւորին կողմէ պաշտօնապէս։ (Մէճ. 1747)

Յօդ. 112. Երբ մէկն իր գործած գործին համար երդման ներքևի, գործն այնպէս գործած լինելուն կամ չըլլալուն վրայ՝ հաստատական կամ ժխտական վճռական կերպով երդման կը քաշուի, բայց երբ ուրիշի գործած մէկ գործին համար երդման առաջարկ լինի, նոյն գործին տեղեկութիւն չունենալու միայն երդում կ'առաջարկուի։ (Մէճ. 1748)

Յօդ. 113. Երդումն կամ 'ի պատճառէ կամ յարգեանց կ'ըլլայ. խնդրոյ մը գոյութեան կամ տեղի ունեցած ըլլալուն կամ չըլլալուն համար եղած երդումը 'ի պատճառէ է։ Իսկ գործի մը դեռ ևս տևական և ճնայուն ըլլալուն կամ չըլլալուն համար եղած երդումը՝ յարգեանց երդում կ'ըսուի։ Օրինակի համար՝ առուծախի մը դատին մէջ նոյն առևտուրն բնաւ տեղի ունեցած չըլլալուն համար եղած երդումը 'ի պատճա-

ռէ է. բայց առևտուրի մը դեռևս մը-նայուն ըլլալուն կամ չըլլալուն համար եղած երդումը յ՝արդեանց երդում է։ (Մէջ. 1749)

Յօդ. 114. Խառն դատեր դիզուած ժամանակ մէկ երդումը բաւական է, իւրաքանչիւրի համար զատ զատ երդում առաջարկելու հարկ չկայ։ (Մէջ. 1750)

Յօդ. 115. Գործառնական դատե-րու մէջ երբ մէկու մը երդում իյնայ և առաջարկուի, բայց նոյն անձն ըսէ բա-ցայայտ թէ, երդում չեմ ըներ կամ լը-ռութեամբն յայտնէ երդումէ հրաժա-րիլը, դատաւորը նորա ընկրկումին վրայ վճիռը կուտայ։

Վճիռն տրուելէ յետոյ երդում ընե-լու յօժարութեան կարևորութիւն չի տրուիր և վճիռն հաստատուն կը մնայ։ (Մէջ. 1751)

Յօդ. 116. Համրի մը՝ ծանօթ նշան-ներով ըրած երդումն կամ երդում ընե-լէ ընկրկումն ընդունելի է։ (Մէջ. 1752) և (Տես Յօդ. 82)

Յօդ 117. Եթէ ամբաստանող մը ըը-նաւ վկայ չունիմ ըսելէ յետոյ՝ վկայ բե-րէ, կամ այս ինչ ու այնինչէն զատ վը-կայ չունիմ ըսելէ ետքը՝ երդման համար ուրիշ վկայ ունիմ ըսէ, չկրնար ընդու-նելի ըլլալ։ (Մէջ. 1753)

18 Յուլիս 1881
Պատրիարքարան Հայոց

Ազգային Վարչութեան Խորհրդոյ
Դատական Խորհրդական
ՍԷՐՈՎԲԷ ԱԶՆԱՒՈՐ

Դատաւորաց ստանձնած պաշտօնին ծանրութիւնն կը թեթևնայ, և փափկութիւնն կը դիւրանայ, երբ դատաւորն ուշադիր ըլլայ դատասացներուն ըրած պաշտպանութեանց, անաչառութիւնը անդրդուելի լինի վիճողներու անձնական կամ վիճակային անհաւասարութեանց առջև, արդարութիւն ըլլայ դատաւորին ընելու քննութեանց և տալու որոշման կանոնն և ուղղեցոյցն, երբէք չմոռնալով թէ՝ նոյն ինքն՝ ԱՍՏՈՒԾՈՅ օրէնքն է զոր կոչեալ է գործադրել։

Ազգային Կեդրոնական Վարչութեան Դատական գործոց Խորհրդականին ստորագրութիւնը, և Տեսչութեան Կնիքը չկրող տեսարերն անվաւեր են։

ԱԶԳ. ԿԵԴՐ. Վ. ԱՐԶՈՒԹԵԱՆ
ԴԱՏ. ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL001803
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL001721
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL002248
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL002247
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL002246
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL002245
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL002244